**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«18» դեկտեմբերի 2023 թ. N 82 Ա

## ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 14-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի N 330-Ա որոշման հավելվածով հաստատված աղյուսակի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) քաղաքաշինության բնագավառում որակավորման հանձնաժողովի աշխատանքների կատարման և գործերի քննության կարգը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) քաղաքաշինության բնագավառում որակավորման հանձնաժողովի անդամների ընտրության կարգը և անհատական կազմը՝ համաձայն հավելված N 2-ի.

3) շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը՝ համաձայն հավելված N 3-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

12/18/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

**Հավելված N 1**
**ՀՀ քաղաքաշինության**
**կոմիտեի նախագահի**

**2023 թվականի** դեկտեմբերի 18 **-ի N** 82**-Ա**
**հրամանի**

# ԿԱՐԳ

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրման, թեստավորման և կրեդիտների շնորհման հետ կապված որակավորման հանձնաժողովի աշխատանքների կատարման և գործերի քննության հարաբերությունները:

2. Քաղաքաշինության բնագավառում մասնագետների որակավորման հանձնաժողովն (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքաշինության մասին», «Լիցենզավորման մասին» օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

## 2. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից ստեղծվում է որակավորման հանձնաժողով և նույն հրամանով նշանակվում է որակավորման հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

4. Հանձնաժողովի գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են.

1) թեստավորման համար տարեկան առնվազն մեկ անգամ,

2) հավաստագրման համար ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

6. Թեստավորման համար որակավորման հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել մեկ կամ մի քանի խմբերով՝ տարբեր օրերի կամ ժամերի՝ ելնելով թեստավորմանը մասնակցելու համար դիմած մասնագետների թվից:

7. Հանձնաժողովի նիստերն իրականացվում են բացառապես էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով (այսուհետ է-համակարգ):

8. Թեստավորումն անցկացվում է էլեկտրոնային եղանակով՝ շարունակական մասնագիտական զարգացման միջոցառում իրականացնող կազմակերպության կողմից ապահովված համապատասխան ծրագրով և համակարգչային տեխնիկայով կահավորված հատուկ քննասենյակում:

9. Հանձնաժողովի նիստերի օրակարգի նախագիծը ձևավորվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

10. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում հանձնաժողովի նիստին մասնակից անդամների քվեարկության արդյունքում ընտրված անդամը:

11. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է Հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված հօգուտ հայտատուի:

12. Հանձնաժողովի նիստի վայրի, օրվա ու ժամի մասին տեղեկատվությունը հրապարակվում է https://www.azdarar.am/ հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև Կոմիտեի պաշտոնական կայքում՝ նիստի օրվանից առնվազն հինգ օր առաջ:

13. Հանձնաժողովում հարցերի քննարկման ժամանակ կազմվում է արձանագրություն, որում նշվում է՝

ա) հանձնաժողովի նիստի անցկացման ամսաթիվը և տեղը,

բ) հանձնաժողովի կազմը,

գ) քննարկվող հարցի բովանդակությունը,

դ) քննարկմանը մասնակցող անձանց մասին տեղեկությունները,

ե) հանձնաժողովի եզրակացության բովանդակությունը,

զ) տեղեկություններ՝ ընդունված որոշման կամ եզրակացության հրապարակման մասին:

14. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները գեներացվում է է-համակարգի միջոցով և համարվում է վավերացված:

15. Հանձնաժողովի որոշումները հրապարակվում են և պատշաճ ձևով ծանուցվում են հայտատուին է-համակարգի միջոցով:

16. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

2) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

3) կազմում է հանձնաժողովի նիստի օրակարգը, որոշում նիստի անցկացման ժամանակը և վայրը.

4) ստորագրում է հանձնաժողովի անունից կազմվող գրությունները.

5) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

17. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը.

2) նիստի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրակարգի, ժամանակի և վայրի մասին՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

3) հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում գործերի նախնական ուսումնասիրության արդյունքները և յուրաքանչյուր գործի վերաբերյալ եզրակացությունները.

4) արձանագրում է հանձնաժողովի նիստերը և ստորագրում այն.

5) կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները.

6) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

18. Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են հանձնաժողովի նիստերին, կարող են անել հարցադրումներ և քվեարկել.

2) հանձնաժողովի նիստերին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին.

3) սույն կարգի 20-րդ կետով սահմանված հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարեցման դեպքերի վերաբերյալ հանձնաժողովի նախագահն առաջարկություն է ներկայացնում Կոմիտեի նախագահին հանձնաժողովի անդամին փոխարինելու համար:

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

19. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են՝

1) նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքում.

2) անձնական դիմումի հիման վրա.

3) նրա մահվան դեպքում:

20. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով վեց ամսվա ընթացքում հանձնաժողովի նիստերի առնվազն կեսից բացակայելու դեպքում.

2) վեց ամսվա ընթացքում հանձնաժողովի նիստերից անհարգելի պատճառով առնվազն երեք անգամ բացակայելու դեպքում.

3) էթիկայի կանոնները խախտելու դեպքում.

4) օրենքով և հանձնաժողովի աշխատակարգով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում:

21. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են նրա՝ որպես հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման կամ դադարեցման, ինչպես նաև նրա՝ հանձնաժողովի նախագահի պաշտոնից հրաժարական ներկայացնելու դեպքում:

22. Հանձնաժողովի նախագահի կողմից իր պարտականությունները չկատարելը հիմք է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդի կողմից Կոմիտեի նախագահին առաջարկություն ներկայացնելու հանձնաժողովի նախագահին փոխարինելու համար:

23. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

24. Հանձնաժողովը օրակարգում ընդգրկված հարցերը քննում է օրինականության, կողմերի իրավահավասարության, համաչափության սկզբունքների հիման վրա՝ ապահովելով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը:

25. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ Կոմիտեի նախագահի կողմից հանձնաժողովի անհատական կազմը հաստատելուց հետո, բայց ոչ ուշ քան հանձնաժողովի առաջին նիստի օրը շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկացված լինելու մասին ներկայացնում են հայտարարագիր (սահմանված է հավելված 3-ում):

26. Հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել հայտի քննության ընթացքում իրենց հայտնի դարձած օրենքով գաղտնի համարվող տեղեկությունները: Հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել նաև հայտի քննության ընթացքում իրենց հայտնի դարձած այլ տեղեկությունների, ինչպես նաև փաստաթղթերի բովանդակության գաղտնիությունը՝ մինչև համապատասխան որոշման հրապարակումը:

27. Օրակարգում ընդգրկված հարցերը քննվում են թեստավորվող կամ հավաստագրվող մասնագետների կողմից ներկայացված հայտերի, հայտերին կից փաստաթղթերի և լիազոր մարմնի մասնագետների կողմից տրված կարծիքների հիման վրա:

28. Թեստավորման կամ հավաստագրման համար անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմին են ներկայացվում է-համակարգի միջոցով կամ առձեռն կամ փոստով:

29. Թեստավորման կամ կրեդիտների շնորհման կամ հավաստագիր ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմին մուտք լինելուց հետո այն տրամադրվում է համապատասխան ստորաբաժանմանը՝ գործին համապատասխան ընթացք տալու նպատակով:

30. Հայտերի քննության արդյունքում Հանձնաժողովը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) մերժել հայտը,

2) բավարարել հայտը:

31. Հանձնաժողովի նիստի արձանագրության հիման վրա համապատասխան ստորաբաժանման կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով կազմվում է Կոմիտեի նախագահի որոշման նախագիծը և սահմանված կարգով ներկայացվում է հաստատման:

32. Հայտի բավարարման դեպքում հայտատուին է-համակարգի միջոցով առաջարկվում է հնգօրյա ժամկետում օրենքով սահմանված պետական տուրքը վճարելու մասին:

33. Հայտատուի կողմից պետական տուրքը վճարելուց հետո է-համակարգի միջոցով մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան ստորաբաժանման կողմից հայտատուին է հանձնվում Կոմիտեի նախագահի հրամանը և հավաստագիրը:

**Հավելված N 2**
**ՀՀ քաղաքաշինության**
**կոմիտեի նախագահի**
**2023 թվականի դեկտեմբերի 18-ի N 82-Ա**
**հրամանի**

# ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

## 1. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Քաղաքաշինության բնագավառում թեստավորման և հավաստագրման ենթակա մասնագետների որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) կազմված է հանձնաժողովի նախագահից, հանձնաժողովի 7 անդամից և քարտուղարից, որոնց լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

2. Հանձնաժողովի անդամներն են.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 1 ներկայացուցիչ,

2) բարձրագույն ուսումնական հաստատություններից (ԲՈՒՀ) 2 ներկայացուցիչ (համաձայնությամբ),

3) մասնագիտացված հասարակական կազմակերպություններից 4 ներկայացուցիչ (համաձայնությամբ):

2. Հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել այն անձը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով, ունի քաղաքաշինության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքային առնվազն երեք տարվա փորձառություն:

3. Հանձնաժողովի անդամների թեկնածուներն առաջադրվում են սույն հավելվածի 1-ին կետով սահմանված անձանց կողմից առաջադրվելու եղանակով:

4. ԲՈՒՀ-երից կամ հասարակական կազմակերպություններից ստացված թեկնածուներից Կոմիտեի նախագահը հանձնաժողովի անդամներին ընտրելու համար կարող է անցկացնել հարցազրույց, որի ընթացքում հաշվի է առնվում թեկնածուի գիտական աստիճանը, կամ կոչումը,

կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելը, առնչությունը գիտելիքների ստուգման կամ կրթական գործընթացներին, ինչպես նաև ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

5. Հանձնաժողովը ստեղծվում է Կոմիտեի նախագահի հրամանով: Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Կոմիտեի նախագահը՝ հինգ տարի ժամկետով:

## 2. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| Հանձնաժողովի | Ա.Ա.Հ | Պաշտոնը |
|---|---|---|
| նախագահ՝ | Դավիթ Համլետի Գրիգորյան | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ |
| անդամներ՝ | Նշան Եփրեմի Մարտիրոսյան | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի Լիցենզավորման վարչության պետ |
| | Բորիս Մոնիստի Քոչարյան | Հայաստանի ճարտարապետների պալատ |
| | Սևադա Սմբատի Հայրապետյան | Հայաստանի շինարարների միություն |
| | Ռիտա Էդուարդի Ավագիմյան | Հայաստանի շինարարների միություն |
| | Արտաշես Նիկոլայի Սարգսյան | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| | Ավետիք Արտավազդի Արզումանյան | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| | Արայիկ Գրիգորի Քուրդյան | «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն |
| քարտուղար՝ | Անի Աշոտի Գրիգորյան | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության ավագ մասնագետ |

Հավելված N 3
ՀՀ քաղաքաշինության
կոմիտեի նախագահի

2023 թվականի դեկտեմբերի 18-ի N 82-Ա
հրամանի

**ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ**

**ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ես՝ որակավորման հանձնաժողովի անդամ _____
Անուն, ազգանուն

սույնով պարտավորվում եմ, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի կողմից ընդունված որոշման հիմքով որակավորման հանձնաժողովի գործընթացի շրջանակներում իմ և հանձնաժողովի նիստերի օրակարգում ընդգրկված մասնագետների հավաստագրման կամ թեստավորման կամ կրեդիտների շնորհման մասով հայտարարագրման ենթակա շահերի բախման առկայության՝ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր, տատ, պապ, թոռ) կապված լինելու դեպքում հայտարարել և նկարագրել այն, ինչպես նաև շահերի բախմանը առնչվող այլ հանգամանքները և ինչպե՞ս է այն լուծվել:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____ _____ _____ 20 թ.
(Հայտարարագիր ներկայացնողի անունը, ազգանունը, ստորագրությունը)